

ՎԵՍՈՒՎ. Ի ԲՈՐԲՈՒԺՄԱՆ

Երկրիս վրայ կոյ այնպիսի տեղ մը՝
ուր կարծես դրախտն կպած է դժոխոց
հետ, և երկրային Եղեմն հանդշած է
անդընդոց ահաւոր զօրութեան վրայ .
գաղափար մը՝ որ հնոց մորքին մէջ ալ
ծնած էր, վասն զի կամպանիոյ հիա-
նալի գեղեցկութեանց մէջ զետեղած
էին Աւելնեան լիճը, նախասենեակ
ալքայութեան Պլուտոնի, զոր կը նկա-
րագրէ Վիրզիլիս իբր տխուր ու զար-
հուրելի տեղ մը:

Հոն ուր կապուտակ ծովն կ'ընդգրկէ
հրաշալի ցամաք մը, և Նարովի ան-
հարթ ափանց երկայնութեամբ մինչև
Պայա քաղաքը, կը տարածուին զի-
մացդ շարք մը ստորերկեայ ծխաշունչ
պատուուածոց, ուր զիշեր մը ճայթե-
ցաւ յանկարծ Մոնթէ Նուովոյ, և կլեց
արդաւանդ արտորէից հետ շատ մ'ալ
գեղեր հանդերձ բնակչք և երէովք :
Հոն, Ասդրսնէ, երբեմն խառնարան և
հիմա թագաւորական որսատուն, կե-
ցած է տակաւին իր ձուաձեւ բաժակո-
վը, կրելով վրան հրարդիսային ծագ-
ման նշաններ. Նոյնպէս և Սոլֆադա-
րա, հրարտովս կէս շինեալ, և դռնակ
ապահովութեան ընդարձակ կաթսայի
մը՝ որ կ'եռայ ահագնադոյ զղորդմամբ
փոթորկեալ ծովը նման : Կայ ուրիշ
շարք մ'ալ երկրորդական ծխարանաց,
ինչպէս խռուչք ներուի և Քարայրէ
Շան, որոնք կ'արձակեն անդադար ա-
ւելի կամ նուազ թանձր ծուխ մը :

Վերջապէս կու գայ Վեսուվ, պլու-
տոնական թագաւորութեան ներկայ
բռնաւորն, որ երկրիս կերպոնական
հրոյ ահաւոր զօրութիւնը ձեռք առած
կը գլորէ զնարովի գոռալով, կ'ըսպառ-
նայ որոտմամբ Ուեղինա ու Յորդիչի
զիւղից, և կը նստի անտեղիստալի ան-
շարժութեամբ Հերկուլանոյի ու Պոմ-
պէայի աւերակաց վրայ :

Հրաբուղիս մը բորբոքման վիճակի

մէջ չի տեսնողն՝ չի կրնար երևակայել
այն տպաւորութիւնը զոր կը ներգործէ
լեռն իր այդ գրից մէջ՝ կարծես գեր-
բնական էակ մ'է ընդունակ մարդկա-
յին կրից, որ կը խօսի անդընդոց մի-
ջէն. կը կատաղի ու կը հանդարտի, կը
սպառնայ ու կը լոէ, և կը թափէ յան-
կարծ իր հրացայտ բարկութեան լա-
ւաները ցաման առարկայից վրայ :

Վեսուվի սովորական ձեն ու գրա-
ւած գիրքը, որ կը տիրէ ափանց վրայ .
ուր աշխարհիս գեղեցիկ ծովն կ'ընդ-
գրիէ գեղեցկագոյն ցամաք մը, թա-
տրոնական երևոյթ մը կու տայ իր ապա-
կանարար մոխճնութեանը : Փետրանը-
ման սպիտակագոյն շոգուլ պսակեալ,
միակ ամպ երկնից կապուտակ կամա-
րին վրայ, կարծես զոհագործութեան
վսեմ բագին մ'է, որ կ'առաքէ իր
խոռնկերը յերկինս, 'ի շնորհակալու-
թիւն շրջակայ գեղեցիկ բնութեան :

Թէ որ միտք բերենք վեսուվի բազ-
մագարեան գործունէութեան ընթաց-
քը, և բաղդատենք իր ցաւոց պատ-
մութիւնը անխոռվ հանդարտութեա-
նը հետ, կը գտնանք զինվը խորամանդ
մատնի մը՝ որ իր որսը պատառելէն
առաջ կը խարէ զանիկայ պէս պէս հրա-
պուրանօք, ծածկելով արտաքին կեղծ
հաճութեան տակ իր ծոյցն տխուր
գաղտնիքները :

1872 տարւոյն յունուար ամսոյն վեր-
շերը կենացս մէջ առաջին անգամ կը
գտնուէի՝ այդ լերան վրայ, առանց
ամենեկին կասկածելու իր գաւաճանու-
թենէն, մինչդեռ նա առանց դիտնա-
լու կը մեքենայէր իր ստորերկեայ
խորոց մէջ ապրիլ ամսոյն զարհութելի
գաւը : Թէպէտ նոյն ատենէն սկըսեր
էր լսուիլ հեռաւոր ու խուլ կերպով

1 Գրողն է. Մ. Քէրք գիտնականն, որ նոյն
ասրին այցելութեան գնացեր էր Վեսուվի:

վետուվի քստմնելի ձայնը, բանտարկեալ գաղանի մը մերնշման նման, բայց ամենենին չէր կարծուէր թէ պիտի մոլդենէր այնշափ մինչև քիչ ատենուան մէջ յաւել պիտի դարձընէր շրջակայ զուարիթ բնութիւնը:

Սկըսաւ երբեմն երբեմն քարեր ժայթքեցնել բաժակէն, մինչդեռ ծուխն ու շրջին ալ անընդհատ կը շարունակուէին, գիշերներն ալ կը տեսնուէր երբեմն գագաթանը վրայ կարմրագոյն լցո մը: Եւ այս նախընթաց չարագուշակ նշաններն տեսեցին մինչև մարտ ամսոյն վերջերը, շարունակուելով նաև լաւան, որ կամաց կամաց կիշնար բաժակէն վար:

Քանի մ'օրէն դադրեցան այս ամեն բաներն, և կարծուեցաւ թէ մարած ըլլայ բոլորովին և ամեն վտանգ անցած: Բայց գրեթէ ամսուան մը չափ հանդիսատ տալէն ետքը, ապրիլի 24ին գիշերը թուէր թէ լեռն բոլորովին դիւահարած ըլլայ, վասն զի կը թափէր գագաթէն երեք ուղղութեամբ լաւայի հեղղներ, և կ'արձակէր դէպ երկինք հրացեալ ծիսոյ սիւն մը, տարածուելով ապա քաղզին վրայ: Երկրորդ օրը նորէն գաղրեցաւ, և համարուեցաւ որ գէթ այս անզամ ցասման վերջն հասած ըլլայ: Բայց խարէական էր, վասն զի փոխանակ հանդարտելու, ապրիլի 26ին առաւօտեան ժամը երկուքին ահաւոր ժայթքմամբ ցուցուց իր վերջին կատազութիւնը, լիրան պղտի. կատարը օդ ելաւ, իսկ մեծ կատարը վերէն 'ի վար ճեղքեցաւ, թափելով հրացեալ նիւթոց ծով մը: Յողոր նոյն օրը բորբքեալ վիճակի մէջ էր վեսուվ. և այնպէս խռոված ու այլայլած, որ ամեն վայրկեան կարծես օդ պիտի ելլար:

Լերան գագաթը ծիսով պատած էր, որ պտուտկելով բաժակին չորս կողմը, ամպանման լիրան կողերէն վար կը թաւալէր, հետեւելով լաւային ընթացեցը: Վեսուվ այն ատեն առաւ իր յետին սաստկութիւնն երբ սկըսաւ ահագին քանակով քար, ծովս ու մոխիր արձեկել գուրս, որոնք ձգուելով

հաստատութեան մէջ, մինչև քանի մը հազար ոտք վեր կը բարձրանային, և ապա մկուելով քամիէն կը սփուէին երկնից ու հորդոնին վրայ թանձր ու սեագոյն ամպ մը: Կրակն, միրիկն ու գեանաշարժն խառնուելով իրարուհետ, կարծես նոր տեսակ բնութեան զօրութիւն մը կը տեսնուէր հօն ցայնժամ անձանօթ: Այլ ամեն բաներէ աւելի ամենուն սիրտը տագնապողն ու բոտումն էր, որ երկրիս խորերէն կը սպանար բնութեան դէմ: անդնդոց խուլ ձայնը մերթ կը սաստկանար և մերթ կը զիջնանէր առանց բնաւ լրելու:

Ուզինայէն ու բորդիչիէն նարօի տանող ճամբան ցաւալի տեսարան մը կ'ընճայէր աչաց: Այդ ճամբուն երկայնութեամբ կը տեսնուէր անհամար փախստէից ամբոխ մը հանդերձ սպարով, կառքերով ու կենցանիներով, որոց վրայ զետեղած էին իրենց վտանգեալ տանց կահնկարասիրը: Կանայք քուրչերնին կամուսերնուն վրայ առած կամ ձեռքերնին բռնած՝ աճապարան նօք կը փախցընէին իրենց որդիքը լալով. պառաւք ահաբեկած նստած էին սայլից մէջ իրենց կարասեաց վրայ. Հումկու մարզիկ կը խուսէին անվողին նին ուսերնուն վրայ առած: և տկարներն ու հրանդներն ալ գրուած էին պարկերու կամ յարդի շեղերու վրայ. ամեն տեսակ ցաւ, աղէտոք ու տաժանմունք կը տեսնուէին ու կը կրնուէին անդագար, կը յայտնուէին հօն ընտանեաց ծածուկ հոգերն ու գաղտնի ցաւերն, և կրնորոգուէին անցեալ ժամանակաց մոցուած բազմապիսի անձ կութիւններն:

Թէպէտ սաստիկ էր ցաւն, այլ խուլ և անարձագանգ կը մնար, զուցէ սաստիկ նոր ըլլալուն, և գուրս ելլալչկարենալուն համար. ոչ աղաղակ կը լսուէր և ոչ ողրոց ձայն մ'այդ վատարախտ փախստէից բերնէն: Գուցէ ափշութիւնն կամ քաջարտութիւնն, անըզգայութիւնն կամ համակամութիւնն զամենքն էր զիւցաղն ըրած: Գրեթէ ամենայն ոք կըզդար աղէտից սաս-

տկութիւնը, բայց կը ծածկէր իր ցաւն հասարակաց ցաւուն անտարբերութեան մէջ։ Բնութիւնն կը տեսնար զմարդ անխռով հանդիսատես իր յուղմանը, և կարծես բոլոր ոյժն և անսանձ կատաղութիւնը կը թափէր խռով վելու համար զինքը բայց չէր յաջողէր։

Բնոնդէ Մատոտալինայի մօտ տեսանուեցաւ փախստէից ուրիշ ամբոխ մ'ալ, իրարու հակառակ վագելով։ Բոկոսն ու հերարձակ կանայք կ'ելլային նարողին տաղնապատ, և ձեռքերնին խաչելութիւն՝ կը դիմէին լաւային ընդ առաջ կարդալով երկնից նպաստը այդ ահաւոր թշնամուն դէմ։ Այդն իսկ կամուրջին վրայ Ս. գենարիոսի պատկերին առջև մոմեր վառած էին, որ արձանացած էր հոն ձեռքերն դէպ ՚ի վեսով տարածած, արգիլլով զլաւան քաղքին մօտենալիէն։

Ի՞նչինա գիւղին եկեղեցին շինուած է վեսովի առաջին զառ ՚ի թափին վրայ, ուսկից մարթ է ճիշդ գաղափար մ'առնուլ հրարդիսին անընդունելի գործունութեան վրայ։ Կը թուշէին յօդս հաղարաւոր ոտք բարձրութեամբ և կը փոթորկէին փոշոյ կամ յարդի պէս մրրկի ատեն, քարեր, խիճեր և լաւայի զանգուածներ։ Ամեն զօրաւոր որոտման երկիրն կը թնդար. որուն գոչիւնը այնպէս սաստիկ էր, որուն չէր կրնար հաւասարիկ ոչ մրրկին, ոչ փոթորկին և ոչ ալէկոծ ծովուն ձայնը, և արձագանքն կը կրկնուէր լերանց մէջ։

Նոյն իսկ հոս ժողովուրդն հանդարտ և անխռով էր. կրպակներն գոցուած էին և շատ տուներ անապատացած. բայց շատերուն առջև ալ նստած էր տանտէրն իր ընտանեօքը սեմոց վրայ, և կը դիտէին զլաւան մէկ մղոն հեռաւորութենէ որ երթալով դէպ իրենց կը մօտենար, տարածելով թանձր շոգի մ'իր քալած ճամբուն երկայնութեամբ։ Արդ հրացանով և Ազգային Պահանորդ գիւղարկով հասարակաց ապահովութեան գունդ մը կազմած էին, և կը պատրսէին փողոցաց մէջ պահպանելու

իրենց տուները և ունեցածնին աւազակաց ձեռքէն, որոնք թափած էին հոն բազմութեամբ, որս մ'ընելու ՚ի խռովութեան, և հասարակաց զժբախտութեան ատեն իրենց բախտը շինելու համար։

Տեղացիք երբէք տեսած չէին զվեռուվ այդքան սաստիկ բորբոքած, ոչ լաւայի քանակով և ոչ խառնարանաց բազմութեամբ՝ որք ամեն կողմանէ բացուած էին. այնպէս որ բոլոր լեռն պայթողական նիմթերով լեցուած ըլլար իրեւ տիտանական ոռումք մը։ Մինչև հիմա լուսա գժբախտութեանց մէջ, երեսուն անձանց զոհը միայն եղաւ. որոնք հետաքրրութեամբ համարձակելով լիրան վրան ելլալ մստանց դիտելու համար բորբոքումը, պաշարուեցն լաւային և թաղուեցան հոն։

Տէրութիւնն, քաղըին տեսաւութիւնն, և զինուորական ու քաղաքական իշխանութիւնք ամեն ձեռքերնէն եկածը ՚ի գործ կը գնէին փախստէից տեղափոխութեան մինչոցներ մատակարարելու և պատսպարելու զանոնք ՚ի Նարողի։ Քաղքին բոլոր համաշխարհիկ կառքերն վարձուեցան, և երկաթուղիք կը տեղափոխէին ծրի՛ փանգեալ աշխարհաց բնակիները։ Զինուորանոցք, հեւանդանոցք և սոսկականաց տուներն ապահնեալ եղան այն եղիկեեաց, և ամեն ինսամք կը մատուցանէին մեղմելու անոնց վիշտերը։

Նոյն գիշերը Ս. Լուչիային տեսնուած բորբոքումը ահաւորագոյն էր քան զբնաւու։ Երկինքն վաս ու լրսաւոր շոգելով պատած կարծես կ'այրէր բոցակէզ. Հառնարանն կը թաւալէր լիրան կողերէն վար հրացեալ լաւայի հեղեղներ, և կիզանող հուլն տարածուելով դաշտաց ու մարդաց վրայ, կը մաշէր զանտառս, զայդիս և զբնակարանն Այդ հրեղէն հեղեղաց միջէն կը փայլէին երբէք երբէք բոցեր, ծառ կամ տնակ մ'էր որ կ'այրէր։

Պաշարուած էր հարողի հրեղէն մեծ լճի մը մէջ, որ լերան ստորոտէն դէպ ՚ի քաղքին կողմը կը տարածուէր դաշ-

տաց միջնու ու կը յառաջէր . Զէին մոտածեր քաղաքացիք Ս . Սեբաստիանոսի պատահարը , որ քանի մը ժամ առաջ զուարթ ու գեղցիկ քաղաքը մ'էր , և հիմա կոյս մ'աւերակաց՝ թաղուած հրոյտակ : Փոյթ չէին ըներ . վասն զի յոտին էր տակաւին Ռեզինա ու Թորրէ . իրենք լաւայէն միայն կը վախնային , որ թէպէտ տակաւին հեռու էր բայց մէկ կողմանէ կը յառաջէր : Բայց այս վախն աւելի երևակայական էր քան թէ իրական . վասն զի Նաբոյի հեռու է վեսուվէն հինգ քիլոմետր և աւելի , և այնչափ միջոց ծածկելու և քաղքին դրան մօտենալու համար , պէտք է մեծ քանակ լաւայի որ երբէք տեսնուած չէ :

Վեսուվի կատաղութիւնն երթալոյլ կը նուազէր . կէս գիշեր չեղած կրակն զգալի կերպով պակսեցաւ , և բազմութիւնն ցրուեցաւ իւրաքանչիւրն իր տունը : Կիրակի առաւոտ զարթեաւ Նաբոյի ողջունելու ոչ թէ իր սովորական գեղցիկ ու զուարթ արշացցոր , այլ գեղնագոյն մինուրրտ մը , մութերկինք և սեագոյն անձքե մը : Ամենայն ինչ պատած էր նուրբ ու մուլթ փոշով , որ կ'ինար մեղմով ձեան պէս :

« Մոխիր կ'անձրէս » , կ'ըսէին քաղաքացիք իրարու մէջ , շատ աւելի վախնալով ու տագնապելով ասկէ քան լաւայէ , կարծելով թէ Պոմպէայի վիճակը պիտի ունենան : Ամեն անկիւն Ս . Գենարիոսի պատկերաց առջև մոմեր կը վառէին , և ժողովրդեան զուարթութիւնն փոխուեցաւ 'ի տրտմութիւն : Այդ մոխիրն երկու կամ երեք որ տեղ , և օտար չէր երևար ըսեն թէ « Զուր կ'անձրէս » , որպէս թէ ընական քան մ'ըլլար այդ տարբերութիւնը : Վեսուվեան դիտարանին լուրերը կը կացընէին պատերուն վրայ ամեն երկու ժամ մէկ մը , և կը կարդար ժողովուրդն անձկութեամբ : Բալմիէրի չի ձգեց երբէք իր վասնգալից դիրքը , թէ և պաշարուած էր լաւայէ հետուն քայլ հեռաւորութեամբ :

Բորբոքումը լիննալէն ետքը , Նաբոյի

կիսով չափ անապատացեր էր , վասն զի բոլոր օտարականք և բնակչաց միջն շատերն վախեր էին վախերնէն՝ յաղթելով իրենց հետաքրքրութեանը : Պանդոկը և օթևանք երկար ժամանակ զատարկ մնացին , և վաճառականնք ու կրպակատէրը անգործ , բայց ասով միայն վնասուեցաւ Նաբոյի 1872 ամին հրկիղութենէն :

Բորբոքմանէն ութ օր ետքը՝ գայի տեսնալու Ս . Սեբաստիանոսի աւերակները , և լաւայի մեծամեծ հեղեղներն որ իներ էին նոյն կողմէն : Ձխուր տպաւորութիւն մ'ըրաւ վրաս արտորէից վիճակը , ուր ամենայն ինչ այրեր ու միկեր էր միխրէ ու հրաբրվային նիւթերէն և ապականեր էին ապրիլ ամսոյն նորաբարպոջ տունկերն : Խեղճ շինականք կը տեսնային որ չորցած էին իրենց բազմաթիւ այցինները , և ամեն բոյս մնխիր դարձած :

Սան ձիորնոյի մօտ հարկ եղաւ անցնիլ սուբով լաւայի գետակէ մը դեռ ծխաչունչ , որ ընդ մէջ կը հատանէր արքունական ճամբան , թաղելով զայն ընդարձակ տարածութեամբն և քան մեղքի չափ խորութիւն ունէր : Ասիկա քարանց ու հողոյ կոյս մ'էր և ամենին հրային երեսոյթ մը չունէր , բայց տակէն կ'այրէր տակաւին , և ծուփն որ կ'արտաշանէր մեղմով , նշան էր ներքին շերմութեանը :

Այս արգելքներն անցնելէն ետքը՝ ազատ էր ճամբան քանի մը հարիւր քայլի չափ . զոր կարելէն ետքը տեսնուեցաւ Ս . Սեբաստիանոսի եկեղեցին և առաջին տուներն ուր հասած չէր լաւան . և աւելի անդին քարանց թումբ մի որ կը խափանէր ճամբան , և ունէր քսան կամ քսան և հինգ մեղքը բարձրութիւն : Ու ասիկա էր զՍ . Սեբաստիանոս մրկող լաւան , որուն վրայ ելայ մազզից , յուսալով տեսնալ քաղքին աւերակները :

Ուր էին . ոչ ուրեք . վասն զի այդ տձե զանգուածոյն տակէն չէր երևար ոչ որմնց կտոր մը և ոչ ուրիշ մնացորդ . քար քարի վրայ մնացած չէր նշանա-

կելու թէ հօն մարդկային բնակութիւն եղած է : Կարծես քարանց ողողում մ'էր , որ տարածուեր էր ամեն կողմ , և ծածկեր ամբողջ արտերը :

Միւս ափունվը կը բարձրանար եկեղեցւոյ մը զանգակատունը , և էր լասաւ առ այ Սոմմայի ժողովրդապետութիւնը , և էր իբրև սահման աւերմանց . և ասիկա այն աստիճան կատարեալ էր , որ թուի թէ լաւան իր ընթացից վրայ զքաղաքը կործանեն ու թաղեն մէկ ըրեր էր . այդ անյագ հրէն ոչ միայն կլլեր էր զայն , այլև մաշեր : Թողած չէր հետք մը գէթ գիրքը իմանալու համար :

Բարեբախտաբար այդ աւերմանց մէջ մարդկային զոհ չի կար . վասն զի բոլոր բնակեցք ժամանակին փախեր

էին : Ապրիլի 26ին կէսօրուընէ ետքը ժամը ուժին , կը սպառնար լւաւան Ա . Սեբաստիանոսի դէմ , և ժամը իննին անհետացեր էր այդ քաղաքը . միակ զո՞յ վեսուլի բարկութեանը :

Թանձր ամպ մը ուսկից կը ճայթէին կայծակը և որոտունք , կը պատէր զբաժակը , և կը մթագնէր իր աւերածոց ախուր հանդիսավայրը . բայց այդ ամպն երբեմն երբեմն կը պատաէր , պարզերով զլեռը , որ այլաձեւալ ու ալսորեալ կը թուէր 'ի մոխրոյ : Թէպէտ մարած էր , բայց միշտ վայրագ ու սպառնալից , անզեղջ չարագործի մը կը նմանէր , որ իր կատաղութեան վերջին թափէն յոդնած , լոռութեամբ նոր ոճիր մը կը մէքենայէ :

Վեսուլ լուած է հիմա :

ՔՆՆՈՒԹԻՒՆՔ Ա.ՍՈՐԵՍՏԱՆԻ ԵՒ ՔԱՂԴԱՍԱՆԻ ՎՐԱՅ

(Յուզում ունաւ)

Քսանըհինգ կամ երեսուն տարուընէ 'ի վեր քանի անգամ ստիպուեցանք սորպելու , մոռնալու , նորէն սորպելու Ասորեստանի և Քաղցէացւոց պատմութիւնը : Ի՞նչ աղէկ էր հաւատարիմ մնալ Յունաց և Երբայեցւոց մեղի աւանդածներուն — Նինսախն վրայ՝ որ Նինուէ շինեց և Նինուաս որդի մը ունեցաւ , Շամիրամին որ Բարելոնը հիմեց , աիրեց Ասոյի մինչև Գանգէս , և միայն Սորագովպիսի փիղերէն յաղթուեցաւ , որն որ Վոլցերի ողբերգութեան մը արժանի գտնուեցաւ : Բայց Պողպայք , Լայարոսք , Ռէվլինսոնք , Լընորմանք , Օպպէրը ումանք՝ Ասորեստանի և Քաղցէաստանի երկիրը պեղելով , ուրիշները սեպաձևներուն ընթերցմամբ , և թափանցերով ասիական լեզուաց խորը , վեր 'ի վայր տապալեցին պատ-

մութիւնը . և ամեն օր կը խառնակեն : Ցեղ մ'ալ կատարելապէս շենք գիտեր : Ամեն վայրկեան Նինուէին և Բարելոնի նոր նոր թագաւորներ կը գտնուին : Իրաւցընէ քանի մը զժուարութեանց լուժմունքները կը գտնուին , բայց զիմացնիս աւելի մեծամեծներ կ'ելլան , և խնդիրներ որոնք նորէն լուծման կարօտ են :

Այսու հանդերձ կրնանք ըսել որ պատմութիւն մ'ալ ունինք , ուսումնական պատմութիւն մը Ասորեստանի և Քաղցէացւոց . սեպաձև գիրերն ալ եղիպտական սրբադրողմ տառից պէս ապահով կանոններով կը կարգացուին . որոշուեցան զանազան ցեղեր , Արեանք , Դուրանեանք , քուշացիք , սեմականք , որոնք ամենն ալ նոյն տեսակ գրելու դրութիւն մը գործածեցին : Պայլատանց